ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

27.02.2026Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երևան

2026 թվականի փետրվարի 27-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Մարիամ Գալստյանը, Արամայիս Փաշինյանը, Արմեն Մարուխյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումն ընդունելու վերաբերյալ,
2. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 03-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշումն ընդունելու վերաբերյալ,
3. Կուսակցությունների կողմից հաշվետվությունը ներկայացնելուց հետո ուղղում կատարելու դիմումը բավարարելու վերաբերյալ քննարկում,
4. 2025 թվականի տարեկան հաշվետվությունները չներկայացրած կուսակցությունների նկատմամբ ՎԻՎ վարույթ հարուցելու հարցի քննարկում,
5. 2026 թվականի անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման ծրագրի նախագծի ներկայացում,
6. Հայտարարագրերին առնչվող խախտումների քննության մեթոդական ուղեցույցի քննարկում:

Օրակարգի ոչ հրապարակային հատվածում ներառված առաջին հարցը Հայտարարագրերի վերլուծության վարչության պետ Տիգրան Ծատուրյանը առաջարկեց քննարկել նիստի հրապարակային հատվածում՝ օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում:

Հանձնաժողովի անդամ Արամայիս Փաշինյանը նշեց, որ Հանձնաժողովի վարչությունների աշխատանքային ծրագրերի հաստատման հարցի քննարկումը հետաձգվեց: Հարցի շրջանակներում Արամայիս Փաշինյանը նշեց, որ իրեն հետաքրքիր է Հայտարարագրերի վերլուծության վարչության աշխատանքները, հատկապես Հանձնաժողովի անդամների վարչությունների աշխատանքների համակարգման ոլորտի փոփոխությունից հետո նշված վարչությունն ինչ հաջողություններ է գրանցել:

Հարցին ի պատասխան Մարիամ Գալստյանը նշեց, որ ինքը չի պատրաստվում հաշվետվություն ներկայացնել Հանձնաժողովի անդամներին, քանի որ Հանձնաժողովի անդամներից հաշվետվություն պահանջելու լիազորություններ վերապահված չեն Հանձնաժողովի մյուս անդամներից:

Տիգրան Ծատուրյանը նշեց, որ որպես հայտարարագրերի վերլուծության վարչության պետ՝ ցնցող արդյունքներ Հանձնաժողովին չի խոստացել:

Արամայիս Փաշինյանը նշեց, որ իր հարցը վերաբերում է Հանձնաժողովի անդամներին և պատասխանն ակնկալում է Հանձնաժողովի անդամներից:

Մարիամ Գալստյանը նշեց, որ ի տարբերություն Արամայիս Փաշինյանի համակարգման ժամանակահատվածին, իր՝ հայտարարագրերի վերլուծության աշխատանքները համակարգելու ընթացքում գործերը Հանձնաժողովի անդամներին ներկայացվում են ավարտուն տեսքով:

Արամայիս Փաշինյանն արձանագրեց, որ աշխատանքները շատ վատացել են ի համեմատություն դեռևս իր համակարգման տարիներին կատարված աշխատանքի հետ և այն ակնկալիքներին, որոնք Հանձնաժողովի անդամները մշտապես ունեցել են դեռևս իր համակարգման տարիներին:

Արմեն Մարուխյանը նշեց, որ թեև աշխատանքների իրականացումը որոշ չափով դանդաղել է, սակայն դրանց որակը բարձրացել է:

Արամայիս Փաշինյանը նշեց, որ աշխատանքների որակների տարբերությունը առաջ և հիմա ինչպիսինն է ըստ վարչության պետի, ինչպես նաև քանակական ցուցանիշներով նշել, թե 2026 թվականին քանի վերլուծություն է Հանձնաժողովի նիստով ներայացվել:

Տիգրան Ծատուրյանը նշեց, որ կատարված վերլուծությունների հետ կապված նախկինում արդեն առաջարկել էր հարցը քննարկել այն ժամանակ, երբ Հանձնաժողովը կամբողջացնի տարեկան հաշվետվությունը, որի ընթացքում կներկայացվեն նաև վարչության կողմից կատարված աշխատանքները՝ քանակական ցուցանիշների տեսքով (Հանձնաժողովի բոլոր անդամները և վարչության պետերը համաձայնել էին առաջարկին), և կարծում է, որ այժմ դա քննարկելը ժամանակատար է: Ինչ վերաբերում է աշխատանքի կատարման տեմպին, Տիգրան Ծատուրյանը նշեց, որ ամեն անգամ երբ քննարկվում է այդ հարցը, խնդրում է հաշվի առնել նաև աշխատակիցների քանակը: Վերջին վեց ամսվա ընթացքում վարչությունից դուրս են եկել թվով 5 աշխատակից: Տիգրան Ծատուրյանը հավելեց, որ վերջին շրջանում Հանձնաժողովի նիստ բերվել են այն վերլուծությունները, որոնք սկսվել են վերլուծվել 3 տարի առաջ:

Արամայիս Փաշինյանը հարց բարձրացրեց, որ Տիգրան Ծատուրյանը վերջին 2 տարին զբաղեցնում է հայտարարագրերի վերլուծության վարչության պետի պաշտոնը և խնդրեց անդադառնալ նաև նրան, թե ինչու է վերջին 3 տարիների կատարված վերլուծությունը նոր ավարտին հասցվում:

Տիգրան Ծատուրյանը նշեց, որ նշանակվելուց հետո 6 ամիսների ընթացքում ինքը չի զբաղվել վերլուծությունների աշխատանքներով, իսկ դրանից հետո իրեն որևէ տեղեկություն չի փոխանցվել և ինքը սկսել է աշխատանքները սկզբնական փուլից:

Մարիամ Գալստյանը միջամտեց, նշելով, որ այս և նմանատիպ քննարկումները (թե՛ բանավոր, թե՛ գրավոր ընթացակարգերով) խանգարում են Հանձնաժողովի աշխատանքների բնականոն ընթացքին:

Արամայիս Փաշինյանը նշեց, որ անհրաժեշտ է հարցը քննարկել և նշեց, որ որոշվել էր հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից իրականացնել 100-200 պաշտոնատար անձի համալիր վերլուծություն, այն դեպքում, երբ բարեվարքության ուսումնասիրության վարչության կողմից կատարվում են տարեկան 300-500 պաշտոնատար անձի համալիր վերլուծություն: Ելնելով վերոնշյալից, Արամայիս Փաշինյանը խնդրեց Տիգրան Ծատուրյանին նշել, թե ինչու հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից չի կատարվում 300-500 թվով համալիր վերլուծություններ, արդյոք իրատեսական է նշված թվով վերլուծություններ կատարել և չկատարելու դեպքում՝ խանգարող հանգամանքները:

Տիգրան Ծատուրյանը նշեց, որ այն մարդկային ռեսուրսները, որը ներկա պահին առկա է հայտարարագրերի վերլուծության վարչությունում՝ հնարավոր չէ իրականացնել: Հավելեց նաև, որ եթե վարչության բոլոր հաստիքները համալրված լինեին և բոլորը ներգրավված լինեին վերլուծություններ իրականացնելու աշխատանքներում, ապա հնարավոր կլիներ:

Մարիամ Գալստյանը հավելեց նաև, որ խնդիրը միայն հաստիքների համալրված չլինելը չէ, այլ նաև մեծ քանակությամբ դիմումներին պատասխանելը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից անդրադարձ եղավ նախորդող նիստերի ընթացքում հաստատված 150 պաշտոնատար անձանց համալիր վերլուծություն իրականացնելու վերաբերյալ, ինչի համատեքստում Արամայիս Փաշինյանը նշեց, որ համակարգման ոլորտները վերաբաշխելուց հետո իրատեսական թիվ է հաստատվել, իսկ դրանից առաջ պահանջվող թվերը իրատեսական չէին: Այս համատեքստում Մարիամ Գալստյանը հրաժարվեց պատասխանել հարցին և առաջարկեց քննարկել օրակարգում ներառված հարցերը:

Օրակարգի առաջին հարցը ներկայացվեց Տիգրան Ծատուրյանի կողմից, որի շրջանակներում ներկայացվեցին Որոշման նախագծի պետահիրավական փորձաքննության արդյունքները: Քննարկման արդյունքում Հանձնաժողովի անդամները հաստատեցին ներկայացված դիտարկումների հիման վրա կատարված փոփոխությունները և որոշեցին ուղարկել հրապարկման:

Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում ներկայացվեցին Որոշման նախագծի պետահիրավական փորձաքննության արդյունքները, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց ընդունել դիտարկումների և առաջարկությունների հիման վրա կատարված փոփոխությունները: Հարցի շրջանակներում քննարկվեց նաև Կառավարության N 82-Ն որոշման համաձայն փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցը (ոչ հրապարակային հարց): Նշված հարցի քննարկման շրջանակներում Հանձնաժողովը որոշեց հայտարարատու պաշտոնատար անձանց 2025 թվականի տարեկան հայտարարագրերում չկատարել նշված փոփոխությունները՝ հաշվի առնելով, որ Համակարգը ինքնաշխատ եղանակով հունվարի 1-ի դրությամբ գեներացրել է տարեկան հայտարարագրերը: Իսկ Որոշման ընդունումից հետո ստեղծված պաշտոնը ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերից փոփոխել միայն այն հայտարարագրերը, որոնք դեռ հանձնված և հրապարակված չեն:

Օրակարգի երրորդ հարցը Տիգրան Ծատուրյանի կողմից ներկայացվելուց հետո, Հանձնաժողովը որոշեց թույլատրել ուղղման դիմում ներկայացված կուսակցություններին կատարել փոփոխություններ, ինչպես նաև կազմել Նախագիծ՝ նշված հարցի հետ կապված օրենսդրական բացերը փակելու նպատակով:

Օրակարգի չորրորդ հարցի շրջանակներում քննարկվեց թվով 16 կուսակցության նկատմամբ ՎԻՎ վարույթ հարուցելու վերաբերյալ հարցը (նախապես տրամադրվել է Հանձնաժողովի անդամներին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգով): Հաշվի առնելով, որ 2 կուսակցություն ներկայացրել է հաշվետվությունը, Հանձնաժողովը որոշեց ՎԻՎ վարույթ նախաձեռնել մյուս 13 կուսակցությունների նկատմամբ,իսկ «Հայաստանի հայ արիական» կուսակցության նկատմամբ Հանձնաժողովը որոշեց ՎԻՎ վարույթ չնախաձեռնել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կուսակցության նախագահը մահացել է:

Օրակարգի հինգերորդ հարցը ներկայացվեց հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետ Տիգրանուհի Խալաֆյանի կողմից: Ներկայացված Նախագիծը հաստատվեց Հանձնաժողովի անդամների կողմից՝ մշտադիտարկում իրականացնելու ժամկետ սահմանվեց մինչև առաջին կիսամյակի ավարտը:

Հաշվի առնելով աշխատանքային ծանրաբեռնվածությունը Հանձնաժողովի անդամները որոշեցին նիստի չքննարկված հարցերը տեղափոխել հաջորդող նիստի օրակարգ:

Օրակարգում ներառված հարցերի քննարկման արդյունքներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումն ուղարկել հրապարկման:

2. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 03-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման ուղարկել հրապարակման:
3. Կառավարության N 82-Ն որոշման համաձայն փոփոխությունները կատարել Որոշման ընդունումից հետո ստեղծված պաշտոնը ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերից փոփոխել միայն այն հայտարարագրերը, որոնք դեռ հանձնված և հրապարակված չեն: Իսկ հայտարարատու պաշտոնատար անձանց 2025 թվականի տարեկան հայտարարագրերում չկատարել նշված փոփոխությունները:
4. Կուսակցությունների կողմից հաշվետվությունը ներկայացնելուց հետո Կուսակցությունների կողմից ուղղում կատարելու վերաբերյալ դիմումները բավարարել և թույլատրել ուղղում կատարել:
5. 2025 թվականի տարեկան հաշվետվությունները չներկայացրած թվով 13 կուսակցությունների (ցանկը նախապես տրամադրվել է Հանձնաժողովի անդամներին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգով) նկատմամբ հարուցել ՎԻՎ վարույթ, իսկ «Հայաստանի հայ արիական» կուսակցության նկատմամբ ՎԻՎ վարույթ չնախաձեռնել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կուսակցության նախագահը մահացել է:
6. 2026 թվականի անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման ծրագրի նախագիծը հաստատել և կատարման ժամկետ սահմանել առաջին կիսամյակի ավարտը:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**